ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 07/28.1/10674-16
«13» 12 2016 թ

Ձեր №

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր՝ 29.11.2016 թվականի 316-ի 5 գրության հայտնում ենք հետևյալը.

1. Ձեր ղեկավարությամբ գործող գերատեսչության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում առանձնացված են արդյո՞ք տեղեկություն ստանալու հարցումները, դրանք գրանցվում են արդյո՞ք քաղաքացիների դիմում-բողոքներից առանձին:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում տեղեկություններ ստանալու հարցումներն առանձնացված չեն: Նախարարության քարտուղարության կողմից, անհրաժեշտության դեպքում, դրանք հաշվառվում են առանձին-առանձին՝ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգից դուրս:

2. Խնդրում ենք տրամադրել Ձեր ղեկավարած գերատեսչության գործող կարգը՝ տեղեկություն ստանալու հարցումների գրանցման և դասակարգման, ինչպես նաև դրանց վիճակագրության վարման վերաբերյալ:

2016 թվականի ընթացքում՝ կապված նախարարների փոփոխության, նախարարության անվանափոխության, նախարարության կառուցվածքային փոփոխությունների հետ, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի՝ սույն կարգին առնչվող հրամանը դեռևս գտնվում է նախագծային փուլում: Այդ իսկ պատճառով նախարարությունն

Կատարող՝ Անժելինա Չիլինգարյան
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
011 597212

առաջնորդվում է «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ:

Ստացած էլեկտրոնային հարցումների և դիմումների հաշվառումն իրականացվում է նախարարության քարտուղարության և տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից՝ secretariat@mineconomy.am, press@mineconomy.am էլ.փոստերով ստացված, ինչպես նաև առցանց (նախարարության կայքէջին հղված) նամակների հաշվառմամբ:

3. ***Արդյո՞ք այդ կարգը հրապարակված է գերատեսչության պաշտոնական ինտերնետային կայքում՝ եթե այո, խնդրում ենք տրամադրել հիպերհղումը***:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված է «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշումը (http://www.mineconomy.am/uploades/Karg_2015.pdf):

Հարգանքով՝ ԱՐՄԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ